# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2008 թվականի N 1293-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 825-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 825-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի՝

ա. սպորտի պետական քաղաքականության և ծրագրերի մշակման վարչությունը սահմանված կարգով վերակազմակերպել մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության,

բ.մարզական հերթափոխի և մարզական կազմակերպությունների աշխատանքների համակարգման վարչությունը սահմանված կարգով վերակազմակերպել մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության,

գ. սպորտի զարգացման ծրագրերի վերլուծության և մարզական ֆեդերացիաների հետ համագործակցության վարչությունը սահմանված կարգով վերակազմակերպել սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության,

դ.ֆինանսատնտեսագիտական վարչությունը բաժանման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով ծրագրերի կառավարման վարչություն և հաշվապահական հաշվառման բաժին,

ե.քարտուղարության ու իրավաբանական և միջազգային կապերի բաժինն առանձնացման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով քարտուղարություն և միջազգային կապերի բաժին.

2) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) որոշման 5-րդ կետում «8» թիվը փոխարինել «7» թվով:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժինը և միջազգային կապերի բաժինը կարող են ունենալ առնվազն 4-ական հաստիքային միավոր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Տ. Սարգսյան**

2008 թ. նոյեմբերի 18
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2008 թվականի**
**նոյեմբերի 13-ի N 1293-Ն որոշման**

**«Հավելված**
**ՀՀ կառավարության 2007 թվականի**
**հուլիսի 12-ի N 825-Ն որոշման**

# Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

**I. Կառուցվածքային ստորաբաժանումներ**

**1. Վարչություններ**

Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչություն
Մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչություն
Սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչություն
Երիտասարդական քաղաքականության վարչություն
Ծրագրերի կառավարման վարչություն

**2. Քարտուղարություն**

**3. Բաժիններ**

Անձնակազմի կառավարման բաժին
Հաշվապահական հաշվառման բաժին
Միջազգային կապերի բաժին
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին»:

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար** **Դ. Սարգսյան**